**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

**«ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆ»**

**ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

0033,ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 78, հեռ.՝ 060469200, ֆաքս՝ 27 30 97, e-mail: info@yermetro.am


№ Ե/39/768-25 «28» 10 2025թ.

«ԱՆԻ ՍԱՀԱԿՅԱՆ» Ա/Ձ-Ի ՏՆՕՐԵՆ
ՏԻԿԻՆ Ա. ՍԱՀԱԿՅԱՆԻՆ
/Տավուշի մ-զ, գ. Ոսկեվան, 1-ին փ, 52 տ.;
էլ. հասցե՝ nuneh9717@gmail.com/

Հարգելի՛ տիկին Սահակյան,

Տեղեկացնում ենք, որ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի և «Անի Սահակյան» Ա/Ձ-ի միջև 2025 թվականի հունիսի 27-ին կնքված ԵՄ-ԳՀԱՊՁԲ-25/87 ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում հատկացվել են ֆինանսական միջոցներ և սույն թվականի օգոստոսի 18-ին կնքվել է համաձայնագիր, սակայն Ձեր կողմից սահմանված ժամկետում մինչև սույն թվականի սեպտեմբերի 08-ը ներառյալ 1-4-րդ չափաբաժինների մասով մատակարարումը չի իրականացվել:

Հաշվի առնելով վերոգրյալը, հայտնում ենք, որ 2025 թվականի հոկտեմբերի 28-ից «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից Պայմանագիրը միակողմանի ամբողջական լուծվել է:

Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պայմանագիր կնքելիս Ձեր կողմից սահմանված կարգով ներկայացվել է որակավորման և պայմանագրի կատարման ապահովումներ՝ միակողմանի հաստատված տուժանքի համաձայնագրերի տեսքով, տեղեկացնում ենք, որ Պայմանագրի լուծման արդյունքում՝ ԵՄ-ԳՀԱՊՁԲ-25/87 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված կարգով պետք է ապահովվի որակավորման ապահովման մասով՝ 197,025.00 (մեկ հարյուր իննսունյոթ հազար քսանհինգ) ՀՀ դրամի չափով, պայմանագրի կատարման ապահովման մասով՝ 131,350.00 (մեկ հարյուր երեսունմեկ հազար երեք հարյուր հիսուն) ՀՀ դրամի չափով գումարների փոխանցումը «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի 1570083324940100 հաշվեհամարին:

Վերոնշյալի վերաբերյալ տեղեկացվել է նաև Ձեր կազմակերպությանը սպասարկող բանկին՝ «Արդշինբանկ» ՓԲԸ-ին:

Խնդրում ենք ապահովել վերոնշյալ գումարների փոխանցման իրականացումը:

Միաժամանակ հայտնում ենք, որ վերոնշյալ գանձումների անհնարին լինելու դեպքում «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն այդ հանգամանքի վերաբերյալ տեղեկատվությունը՝ համապատասխան պատճառաբանված որոշմամբ, տրամադրելու է լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները կիրառելու նպատակով:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ

ԲԱԲԿԵՆ ՍԵԴՐԱԿՅԱՆ

Կատարող՝ Վ. Էլոյան

Հեռ. +374 98389689 (ներքին հեռախոսահամար՝ 11)